


կրնայ յառաջ բերել: Ի Պերլին տեղութեան
ազարանին մէջ այս մըքենայս 1849ին ցոյց դրու-
ելու 11 եւ 12* որը ժամու մը մէջ 6000 նշա-
նագիր շարեց ձեռագրէն. իսկ եթէ անգղերէն
կամ գաղղիերէն նշանագրերովն ըլլայ շարելի
նիւթը, միջին հաշիւը կրնայ 8000 թուոյն հաս-
նիլ: Գտիչն 1874ին ծանոյց՝ թէ կարելի է 7000
նշանագիր շարել ժամու մը մէջ, եթէ շարու-
ածոյն կարգադրութիւնն երկրորդ անձ մը հոգայ:
Նոյն իսկ գերմաններէն նշանագրովք, որուն գրա-
շարութիւնն շատ աւելի դժուարութեամբք միա-
ցեալ է, կրնայ իրը 8000 նշանագիր շարել ժա-
մու մը մէջ՝ եթէ շարուածոյն ձեւը սովորական
փորձածալ եւ մեքենավարը վարժ ըլլայ, այնպէս
որ մեքենային նշանագրաց խողովակն փոխելու
ժամանակն աւելորդ կ'ըլլայ:

(ԱՆՉԵՆԸ Է՛Լ ԱՅԻՄ): Կ. Յ. ԹՈՒՆԻՍԻԱՆ



ՄԱՆԵՐԱՅԻՆ

ՆՈՐԱՆՈՒԹԻՒՆ

Երկրի մերսը:

Ս իրենի մտազգործական ընկերութիւնն
արտաւայ կարգի շահաւոր պեղման մը ձեռնարկած
է եւ քիչ ժամանակուան մէջ անդ մը խորութիւնը
մինչեւ 4100 անգղիական ոտք հասած է. 12 խաւ
զորաւոր ածուխ, ինչպէս նաեւ նշանաւոր քանա-
կութեամբ նստի, քարիւղ, սուլայ եւ երկաթի
հանք գտնուած են. սակայն եւ այնպէս շահաւոր
ըլլալու շափ շատ չեն: Ընկերութիւնն այս պեղման
փորձը գաղթեցնելու միտք ունի. երբ աշխարհա-
ժանութիւնը Երկրախոս Փրոֆ. Ուայթի Ֆիլատելֆիտ
առիկայ տեղեկանալով՝ երկրաօստական դպրոցին
մտադրութիւնն առ այս հրափրեց, որ պեղումը՝
մինչեւ մէկ անգղիական մղն խորութիւն, իբր 1600
մեդր, յառաջ պիտի տանի, եւ յետոյ Միացեալ
Նահանգաց Քառասնորութիւնը մնացած աշխատու-
թիւնները յանձն պիտի ստան. միայն եւ միայն
գիտնական նպատակաւ: Յատկապէս ասոր համար
պատրաստուած գործիներով բարեխառնութեան,
սաղնիքաւորութեան եւ սոյնպիսի իրաց վրայ եր-
կրի ներքը դնալութիւններ պիտի ըլլան, եւ հաս-
տատուապէս քրտնած է՝ անխնդ աշխատութեամբ
ու այժմեան արտեւտական օգնականութեանց
վրայ յիցեալ՝ փորձելը շարունակել եւ վերջին
հարաւոր խորութեան հասնիլ: Բայցուած ծակը
ցայժմ միշտ 8 անգղիական մասնաշափ լայնութիւն
ունի, եւ եթէ կարծիք է՝ այսպէս պիտի շարունակուի:

Այս շահաւետ փորձի արդիւնքը՝ ինչպէս նաեւ, աս
այս գործածուած մըքենայս, 1893ին Շէրբուրի
արուեստահանգէսն ի տես պիտի հանուին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հիւանդին ճես շուր վարդաւորն եղածով:

Հիւանդն երբեք պէտք չէ քնէն արթնոյննել,
եւ ոչ իսկ գեղ տալու նպատակաւ: Երբ հիւանդն
առաջին կապուորիչ քնէն արթնոյած է, ալ իսկոյն
չի կրնար քնանալ: Հիւանդին հետ երբեք յանկարծ
խառելու եւ իւր բողձացածներն ուշադրեցնելով տան
ջելու չէ: Դառնեալ պէտք չէ բանի մ'երկար ժա-
մանակ սպասելնել. աղմուկը, խշտոցն ու շշուկ-
որ գհիւնեղը կը գրգռեն կամ իւր լսելիքը կը յոգ-
նեցնեն, շատ վնասակար է. թարմ ծաղկանց փուն.
Քն աւելի հիւանդին ուրիշ բան այնչափ ուրախու-
թիւն չի պատճառեր: Ոտք պիտեք նն հիւանդաց
պցեղներով մտադիր ըլլալ: Պէտք չէ հիւանդին
փարսք եւ շփոթութիւն ցուցնել: Հիւանդին
վրայ պէտք է այն աղբեղութիւնն ու տալաւորու-
թիւնն ընել՝ թէ գիտէ մարդ անոր ուզածը: Առող-
ջացող հիւանդին պէտք է փոփոխութիւններ ընել:
Պէտք չէ այն փոքր ձեռագործներն արգիլել, որոնք
հիւանդին ուրախութիւն կը պատճառեն: Բազմա-
թիւ պտղաւորից մէջ հիւանդին առողջութեան
համար աւելի գեղը՝ քան թէ հիւանդին համոզըն
ու կամքը քանց աւելելու է: Հիւանդներն լաւ խոս-
մելու համար կը պահանջուի բնածին ընտրողութիւն
եւ ճարտարութիւն:

ՄԱՆԵՐԱՅԻՆ

Հնագոյն եւ նորագոյն ժամանակի շաքալ:

Շ Դարն այն ապրանքներն է, որոնց գինը
թէպէտ յընթաց ժամանակաց ըստ կարի նուազած
է, սակայն գործածութիւնը զգալապէս դարգացած
ու աճած: Եւրոպա յամին 1700՝ 100 միլիոն լիւար,
40 ասորի վերջը՝ եւսականիչ, իսկ յամին 1870
դրամ է 4000 միլ. լիւար շաքալ գործածած է: Այժմ
եղէնաշաքալի ամբողջական բերքն այնչափ շատ
է, որ արեւմտեան Հնդկաստանն եւ Գուպա հազիւ
հազ. կէքը կրնան մատակարարել: Եւրոպա յոն-
թացս եղբնաւորաւ ամաց ամ րատ ամ 2000 միլ.
լիւարէն աւելի շաքալ արտադրած է: Այս ահագին
թիւը կ'ապացուցանէ թէ շաքալի գործածութիւնը
ներկայ դարուս մէջ մըշափ աճած է. բայց ասոր ոչ
սակաւ նպատամատոյց եղաւ շաքալի օրծած գինը.
որովհետեւ նախընթաց դարերու մէջ շաքալաց
թանկ ըլլալով՝ բազմաց իսկ անմատոյց էր եղած:
Ըստ վաղեմի ծանօթութեան յամին 1319 շաքալ-
ին կենդնարը 440 ֆիւրին, իսկ հնդկաստանե-
րորդ դարուն մէջ կենդնարը 350 ֆիւր. կ'արժէր:
Կենթադրուի որ այն ժամանակը միայն եղէնա-
շաքալ կար: Բանջարաշաքալի գիւտածը միայն իրոյաւ
շաքարն իւր այժմեան տաճն գոյնի հասնիլ: